ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«06» փետրվարի 2018 թ. № 41-Ա

ՀՐԱՄԱՆ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՈՒ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող ու ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն չներկայացրած հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից որպես ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառումը չեղյալ համարելու մասին դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2018 թվականի մարտի 6-ի N 41-Ա հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՈՒ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 59-րդ և 293-րդ հոդվածներին համապատասխան՝ խնդրում եմ չեղյալ համարել

_____-ի [ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ]
հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը) (ՀՎՀՀ)

20_____թվականի հունվարի 1-ից կամ պետական գրանցման (որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման) օրվանից կամ գործունեությունը դադարեցրած հարկ վճարողի գործունեությունը վերսկսելու օրվանից հարկային մարմնի կողմից որպես ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառումը:

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան ***չեմ համարվում ավելացված արժեքի հարկ վճարող*** և հարկային մարմին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում ***չեմ ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն***:

Պաշտոնատար անձ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը